

Իսկ ի հազար հարիւր յիսուն եւ հինգ թւականին՝ (= 1706) նորոգեցան սագերն սրբոյ Կարապետի գեղեցկայարգ տաճարին եւ սրբոյն Ստեփաննոսի՝:

Ի սոյն ամի՝ (1706) Սարգիս Վարդապետն, որ էր ի մեր Դասատանէս, այր խոհեմ յոյժ եւ քաղցրաբարոզ, նորոգեաց սրբատաշ քարամբք կրամածիւք՝ զեղրգուտի լուսաւորչաշէն վանաց զսագերն, հանդերձ այլովք շինուածովք: Եւ աշննդունակ լեալ ի համանմանեաց վերոգրեցելոց, զըովանդակ շինւածոյն ծախսն ինքն հոգաց եւ դարձաւ յառաջին վանսն մեր, եւ անդ փոխեցաւ առ բաղձալին իւր, որոյ հոգւոյն Տէր ողորմեսցի եւ դասեսցէ ընդ սուրբս իւր²:

1 Հայ վանքերու տանիքները հոգ են բոլորովին: Շէնքին կարկառուն մասերը ընդհանրապէս սալարկուած են իրարու ագուցիկ սրբատաշ քարերով. շէնքին այս մասերը ինչպէս նաեւ եզերքները կամ շրթները, Խճ (ըստ Այն-Քապուսի «Ի-յե-տ») կ'անուանուին. եւ իբր արմատ կը գնեն Սոփաշէն, ճարտարապետական ոճ մը:

2 Աննիսիանձ ոգիով ընդմիջաբար կ'արձանագրէ իրենց դասատանէն Սարգիս վարդապետի շինութիւններն: — Եղրդոսի վանքն է Մշու Ս. Յովհաննէսը, Մշոյ արեւմտեան կողմը, 3—4 ժամ հեռի, Ճիշտ Ս. Կարապետի հետ դէմ դիմաց: Ս. Կարապետ դաշտին հիւսիսային կողմը, Ս. Յովհաննէս՝ հարաւային կողմը, Ս. Յովհաննէս, կ'ըսուի նաեւ Արծու-Քիւ Ս. Նշան: Այս երեք կոչումներն ալ իրենց սիրուն աւանդութիւններն ունին: — Արծուաբեր-Եղրդուտինը գրի առած եմ —: Ինձիճեան «Արծուաբեր»ը կը զատէ Ս. Յովհաննէսէն եւ կը նոյնացնէ փոքրիկ եկեղեցիին հետ, որ Վանքէն դուրս է Արեւելեան կողմը, Ս. Գեորգ աղբիւրին քով, գերեզմանատան մէջ. ո՛ր իբր թէ Արծուաբեր աւետարան մը պահուած ըլլայ: Այդպիսի աւետարան մը չկայ հոն որ պահուի, արդէն լքուած մատուռ մըն է: Արծուաբեր՝ Ս. Նշան է (= կենաց փայտէ մասունք), որ կը գողցուի Վանքէն եւ արծիւ մը կ'ազատէ զանի ու կը բերէ վանքին մօտ ծառի մը — Եղրդուտ — վրայ կը գնէ եւայլն.